Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

«ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԵՎ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-897-12.03.2021-ՖՎ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

	Առաջարկի հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկը	Առաջարկը	Առաջարկի վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկի ընդունելու կամ մերժելու վերաբերյալ Հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1.	ՀՀ կառավարություն	Նախագծի ‘‘Հոդված 1.’’-ի 3-րդ մասի ‘‘ա’’ կետ	Նախագծի 1-ին հոդվածի 3-րդ մասի «ա» կետը «տոկոսին» բառից հետո լրացնել «կամ ուղղակի կամ անուղղակի կերպով ունի քսան և ավելի տոկոս մասնակցություն իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում» բառերով:	Նախագծի 1-ին հոդվածի 3-րդ մասի «ա» կետի փոփոխությունը կատարվել է՝ հիմք ընդունելով Նախագծի վերաբերյալ Գլոբալ ֆորումի փորձագետների կողմից ներկայացված առաջարկությունը: Այդ նպատակով ուսումնասիրվել են մի շարք երկրների, այդ թվում՝ Բելգիայի, Ֆրանսիայի,	Ընդունվել է:

				Գերմանիայի, Իսլանդիայի փորձը: Փոփոխությունը համաձայնեցվել է ՀՀ արդարադատության նախարարության հետ, որը կկատարվի նաև «իրական շահառու» հասկացությունը սահմանող՝ ««Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծում՝ մեկ միասնական հասկացությունը ունենալու նպատակով: Նշենք, որ առաջարկվող ձևակերպմամբ «իրական	

				շահառու» հասկացությունը ամբողջությամբ համապատասխանեցվում է ՖԱԹՖ-ի 10-րդ հանձնարարականի պահանջներին:	
2.	ՀՀ կառավարություն	Նախագծի ''Հոդված 1.''	Նախագծի 1-ին հոդվածը լրացնել նոր 5-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ. «5) 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 16.1-րդ կետով. «16.1) տրաստը օտարերկրյա օրենսդրությամբ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպություն է կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող այլ իրավաբանական կազմավորում է, որում տրաստի կառավարիչը ֆիդուցիար պարտավորությունների հիման վրա կատարում է տրաստի հիմնադրի կողմից սեփականության իրավունքով իրեն փոխանցված գույքի հետ կապված գործարքներ՝ ի շահ տրաստի շահառուի:»:		Ընդունվել է:

3.	ՀՀ կառավարություն	Նախագծի ‘‘Հոդված 1.’’ 7-րդ մաս ‘‘25.3-րդ’’ կետ	Նախագծի 1-ին հոդվածի 7-րդ մասի 25.3-րդ կետով նախատեսված «տրաստ» հասկացության հերթական համարը փոփոխվել է՝ դառնալով 16.1՝		Ընդունվել է:
4.	ՀՀ կառավարություն	Նախագծի ‘‘Հոդված 1.’’-ի մասեր	Նախագծի 1-ին հոդվածի մասերի համարակալումները վերանայվել են: 3) հոդվածի 7-րդ մասում «25.1-րդ, 25.2-րդ եւ 25.3-րդ» բառերը փոխարինել «25.1-ին և 25.2-րդ» բառերով:		Ընդունվել է:
5.	ՀՀ կառավարություն	Նախագծի ‘‘Հոդված 1.’’ ‘‘25.3)’’ կետ	Նախագծի 1-ին հոդվածի «25.3) տրաստը օտարերկրյա օրենսդրությամբ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպություն է կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող այլ իրավաբանական կազմավորում է, որտեղ ֆիդուցիար պարտավորությունների հիման վրա տրաստի կառավարիչը կատարում է տրաստի հիմնադրի կողմից սեփականության իրավունքով իրեն փոխանցված գույքի հետ կապված գործարքներ ի շահ տրաստի շահառուի:» կետը հանել:		Ընդունվել է:

6.	ՀՀ կառավարություն	Նախագծի ‘‘Հոդված 5.’’	Նախագծի 5-րդ հոդվածը հանել: Ըստ այդմ վերանայվել են նախագծի հոդվածների համարակալումները:	Նախագծից 5-րդ հոդվածի հանումը պայմանավորված է ««Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի առկայությամբ, որի հարակից փաթեթով կապահովվի երկու իրավական ակտերի միջև համապատասխանությունը՝ կապված ուժի մեջ մտնելու ժամկետների հետ: Նշվածը համաձայնեցվել է ՀՀ արդարադատության նախարարության հետ:	Ընդունվել է:

7.	ՀՀ կառավարություն	Նախագծի ‘‘Հոդված 7.’’	Նախագծի 7-րդ հոդվածում «9-րդ կետը ուժը կորցրած ճանաչել:» բառերը փոխարինել «13-րդ կետում «՝ ոչ ֆինանսական հաստատության կամ անձի» բառերը փոխարինել «գործառույթները հաշվետվություն տրամադրող անձի» բառերով» բառերով:	Նախագծի 7-րդ հոդվածով առաջարկվող փոփոխության հանումը պայմանավորված է նախորդ կետով նախատեսված առաջարկով: Նախագծի 7-րդ հոդվածի լրացումը պայմանավորված է «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի և 11-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետերի միջև համապատասխանությունն ապահովելու նպատակով: Մասնավորապես, Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետը նախատեսում է, որ լիազոր մարմինը սահմանում է հաշվետվություն	Ընդունվել է:

				տրամադրող անձի՝ ներքին դիտարկումների մարմին գործառույթներ իրականացնող ստորաբաժանումների կամ աշխատակիցների բացառությունները, մինչդեռ 11-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետում հղում է կատարվում միայն ոչ ֆինանսական հաստատությունների և անձանց ներքին դիտարկումների մարմնի գործառույթ իրականացնող անձանց կամ ստորաբաժանումների բացառությունների սահմանման իրավասությանը:	

8.	ՀՀ կառավարություն	Նախագծի ‘‘Հոդված 10.’’	Նախագծի 10-րդ հոդվածի 5-րդ մասը «ստուգելու նպատակով,» բառերից հետո լրացնել «՝ արժանահավատ աղբյուրներից ստացված տեղեկությունների հիման վրա,» բառերով:	Նախագծի 10-րդ հոդվածի 5-րդ մասում կատարված փոփոխությունը պայմանավորված է ՖԱԹՖ 10-րդ հանձնարարականին համապատասխանության ապահովման նպատակով: Այսպես, իրական շահառուի նույնականացումը ու ողջամիտ քայլերի ձեռնարկմամբ ինքնության ստուգումը պետք է իրականացվի հիմնվելով արժանահավատ աղբյուրներից ձեռքբերված տեղեկությունների վրա: Այդպիսի պահանջի չնախատեսումը քննադատվել է մի շարք երկրների, այդ թվում՝ Սլովակիայի, Մոլդովայի, Չեխիայի փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի համակարգերի	Ընդունվել է:

				գնահատման հաշվետվություններում: Նման պահանջի չսահմանումը կհանգեցնի նաև այդ հանձնարարականի 5-րդ չափորոշիչի «համապատասխանում է» գնահատականի իջեցմանը:	